արդարութեամբ խօսիլ 'ի Կոստանդինուպոլիս, և նա երդմամբ հաստատէր չառնել թշնամութիւն ինչ, այլ բարիս։ Եւ ապա առեալ զՇէյխն մեկնեցաւ յԵրուսաղէմ, և 'ի հասանիլ նորա 'ի թագաւորեալ քաղաքն, Դիոնէսիոս վարդապետ, որ տակաւին էր անդ, գնաց առ նա ընծայիւք 'ի կողմանէ Փոխանորդին։ Եւ զկնի բանից ասէ ցվարդապետն, թէպէտ հրովարտակն ձեր էլ, եւ ունին գնալ Գործակալք յԵրուսաղէմ, սակայն գործ ձեր չկատարի, մինչեւ ոչ եղէց ես դատաւոր քաղաքին։ Եւ թէ՝ սիրտ իմ ոչ բաժանի 'ի Ցունաց։ այլ արարից ձեզ և թոյլտուութիւն ինչ վասն սիրոյ Պատրիարքին եւ ստէպ աղաչանաց նորին։ Էառ զդատաւորութիւնն 'ի միջնորդելոյ Շէյխին, որ և մեռաւ անդ, և եկեալ յԵրուսաղէմ նստէր 'ի տան իւրում, սպասելով լրման ժամանակի նախորդին իւրոյ։

Տեսցուք արդ թէ զինչ ունի գործել սա 'ի դատաւորութեան իւրում։

Յետ այնորիկ ընթերցան զգիրս Փոխանորդին, յորս մի առ մի պատմէր զամենայն անցս Դրան։ Թէ որպէս հրամայեաց Արքայ պատուիրել նոր Դատաւորին գործակցութեամբ Նուրի Էֆէնտեայ կատարել զգործն Հայոց, և թէ որպէս կոչեցին 'ի Ժողով Նախարարաց զգործակատարն Կուսակալին Դամասկոսի եւ յանդիմանեցին զնա վասն անուղղայ գործոց Բդեշխին, և սաստիկ հրովարտակ առ նոյն Կուսակալ՝ այլովքն հանդերձ։ Գրեալ էր նաեւ Դենպէտն մեծ առ Մուսայ Էֆէնտի, ուր ասէր՝ գրեմ առ քեզ հրամանաւ Արքայի կատարել զգործն արդարութեամբ ընդ Նուրի Էֆէնտեայ, որպէս ցուցանէ քեզ հրովարտակն, և եթէ դու եւս հակառակեսցիս ըստ նախորդին քում, մի կարծեր թէ միայն յաքսորս դատապարտիս։ Նոյնպէս գրեալ էին և մեծամեծք Դրան և Զէքի Էֆէնտի առ Նուրի, զի զմտաւ ածեալ զվախճանն՝ արթնութեամբ կատարեսցեն զգործն։ Հանդիսիւ ընթերցեալ զգիր Դատաւորութեան Մուսայի՝ հաստատեցին զնա յիշխանութեան իւրում ('ի 29 Հոկտեմբերի)։ Իսկ Զուխատարն եմուտ առ Դատաւորն եւ ասէ՝ Դենպէտն զայլ ոք ունէր կացուցանել 'ի տեղի աքսորելոյն, այլ զիջեալ նորա 'ի խնդիրս Հայոց զքեզ կացոյց, սոյնպէս և գրեալ էր Փո-